

# ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ)

## IX

Այն օրն ամբողջ Գոպէն ու Ասօն մի հատ բառ չը փոխանակեցին իրար հետ. Գոպէն ջրազացի թմբի վրայ մնաց, իսկ Ասօն ջրազացի յետեռում ուռիների տակ թափառում էր: Օտարական ուխտաւորների խօսակցութիւնը նրա ամբողջ էութիւնը ցնցել, տակն ու վրայ էր արել, ճակատագիր, կեանք, մահ, ուխտ, սուրբ այլես մի վայրկեան նրա գլուխց չէին հեռանում: Եւ առաջին անգամ ամիսներից յետոյ այդ բոլորի հետ նաև իր սեփական կեանքը բոլոր մանրամանուժեամբ գալիս անցընում էր իր աշքի առաջից: Ասօն փորփրում էր այդ կեանքի մութ խորշերը և զարմանում էր, որ այդ ինքնաքննութիւնը միայն այժմ է կատարում: Ինչը ան մութքան կար, որ հարկաւոր էր պարզել:

Կեանքը մահից էլ զանազանել չի լինում, մտածում էր Ասօն. — և ծշմարիտ, կենդանի եմ ես, թէ մեռած. ախր կենդանութիւնը մի բանի նման պիտի լինի, մի բանի հարկաւոր պիտի գայ, ես ումն եմ հարկաւոր, ոս ինչ կեանք է, ինչու եմ թափառում դաշտերում, ինչ ունիմ այս ջրազացում, ինչու չեմ աշխատում այլես, ինչ պատահեց ինձ հետ, որ չար սատանան մտաւ ինձ...

\*.) Տես Մուլճ № 2.

Սառան, Շիրինենց Սառան գեղեցիկ է, շատ գեղեցիկ, բայց ինձ ինչ, նա այնուամենայնիւ Շիրինենց հարսն է, խաչ ու աւետարանով պսակուած. չէ որ շատ-շատերը գեղեցիկ ձի, եզներ աւնին, ում ինչ, ով կը տայ ուրիշին այդ բոլորը, Եւ Շողերը, խեղճ աղջիկ, երկու ան-գամ սեռ... չէ, մեղք է, գէշ բան է, գեղեցիկն եմ սի-րում, միշտ գեղեցիկը փնդրեցի, և այժմինչ եմ անում, Տէր Աստուած, գէշ բան եմ գործում, մեղք եմ անում, մեռելի ստուերի պէս թափառում եմ, սար ու ձոր ման եմ ածում իմ ձանձրալի, անպէտք գոյութիւնը: Ի՞նչ ա-նեմ, ի՞նչ, որ ջուրն ընկնեմ, երբ սիրում եմ. օ, անի-ծուած սիրտ, ով դրեց քո մէջ այդ անիրաւ բոցը, որ այրում, փոթոթում է ինձ, սիրտ, սիրտ, մոխիր դառ-նաս դուք Ո՞ւր գնալ, ի՞նչ անել, ի՞նչպէս ազատուել այս բոցերից. Ճռվը նետուեմ, Մըրկի սրբի ոտքից վար գլո-րուեմ, թէ... Նա յիշեց մօրը, խեղճ կին... որքան տան-ջուեց, այսքան դարդ միայն մի կնոջ սրտին, միայն նրա համար, որ նա մայր է, քնքոյշ, սիրող, բարի մայր. Քիչ կան դարդուներ, քիչ կան լացողներ. «Երեխան դաշ-տում լալիս է, բուերը կտուրներին վուշու են կան-չում, մեռելները գերեզմաններից դուրս են սողում», այսքանը բաւական չէ: Նա, այն խեղճ պառաւն ինչո-լայ, գէշ բան է, գէշ բան. սիրտ, սիրտ, մոխիր դառ-նաս դուք:

Ասօն նստեց, գլուխը ձեռների մէջ առաւ և դառն-գառն հեկեկաց. նա լալիս էր երկար-երկար, արցունք-ները թափուում էին, հեծկլտանքը բարձրանում, ապա մի վայրկեան խազաղուում, լուսում էր, յետոյ նորէն կուրծքը քանդուում էր, հեկեկոցը սաստականում, և արցունքները հոսում էին: Նրա յաղթ թիկունքը, նրա առնացի ուսեւ-րը ցնցւում էին խորին հեծկլտանքների հետ, և նա ձեռ-ներով արորուում էր կուրծքը՝ կարծես ներսի կրակը մարելու համար:

«Ա.ուշվու, վնւշվու, վնւշվու»... վերստին լսուեց բուի չարագուշակ վայիսնը. Ասօն ակամայ ցնցուեց, նա

յիշեց ուխտաւորի խօսքերը՝ «բուերը վուշվու են անում կտուրների վրայ, մենք գնում ենք սրբերին հարցընելու, կենդանի ենք, թէ մեռած»։ Եւ գնացին, գընացին, մրմնջում էին նրա շրմթունքները, ախ, հաղար երանի ձեզ, որ կարող էք գնալ, որ հաւատում էք և այն այնպէս խորը, որ մահ աչք առած, անցնում էք հաւրամիների, մարդասպաների միջով, փաթաթուել էք ձեր հաւատին և գնում էք... Ես ուզ գնամ, որ սրբի սաքը, և որը կարող է ինձ մի ճաշ անել, երբ ինքս հաստատ գիտեմ, որ մեռած եմ, մեռած... Երեխան գաշտում լալիս է, ես մեռած եմ. բուերը վուշվույ են անում, ես մեռած եմ. մեռելները դիշելները մոնչում են, ես մեռած եմ, սրանք բոլորը իմ թաղման երգն են ասում, լալիս են, որ ես մեռած եմ։ Ապա նա յիշեց Գոպէի սարսափելի պատմութիւնը, յիշեց այն աղջկայ գիտելը, նա մի փոքր մնաց մտածման մէջ, Գոպէի հօր և իր հօր վարմունքի մէջ նա նմանութիւն դտաւ, այն տարբերութեամբ միայն, որ նրա հայրը կենդանութեան ժամանակ է որդուն գժբաղդացրել, իսկ իր հայրը մահից յետոյ, չը որ ինքը հօր վերջին կամքը կատարեց. սիրաը հօր ուխտ հարցնել կարող էր, ինչու յիմարացաւ, ինչու արեց այդ. նրան ասացին, օ, ամենքը, ամենքը, որ հօր վերջին կամքը չը կատարողը իր ամբողջ կեանքում ինչ դործ բռնի, խէր տանել չի կարող, և նա գործեց սընալլ։ Տէր Աստուած, բայց միթէ այդ յանցանքն այնքան ծանր է, որ ամեն բան այնպէս վերջանայ, ինչպէս Գոպէի հետ, մտածումէրնա սարսափով. — միթէ նողերն էլ... Նա ձեռքով մի անհանդիստ շարժում արեց՝ ասես անախորժ միտքը հեռացնելու համար ու լրեց, ոտքի կանդնեց։ Ուռիներն օրօրում էին նրա դլիսի վրայ, հատհատ դեղնած տերեները մի վայրկեան գողդողում, փլուփուում էին օդի մէջ, ապա վայր էին ընկնում ու ծածկում ճանապարհը. Ասօն հանդարտութեամբ ու վշտով քայլում էց այդ տերեների վրայ և մտածում էր սե բաներ։ Այժմ նա յիշեց այն զոյտ տերեները, որ մի օր նա

իր և Շողերի բազդը որոշելու համար առաւ և գցեց գետի մէջ, տերեւսերը պայտա-պայտա արին ու բաժանուեցին. նա կրկին կռացաւ, վերցրեց երկու բարակ, դեղնած տերեւներ, գցեց ջրի երեսին, նայեց, և նրանք փախսան իրարից զանազան կողմեր...

Երբ նա յետ եկաւ ջրաղաց, ճաշ էր արդէն. կամացուկ ներս մտաւ և մնաց քարացած: Գոպէն նստած էր պատի տակ՝ ցորենով լի մի չուալի վրայ, աչքերը յառել էր չախչակին և անշարժացել ինչպէս մեռել: Ալիւրի ձերմակ փոշին հաստ շերտով նստել էր նրա ծեր գլխի ու միրուքի վրայ, բեռնաւորել էր յօնքերն ու արտեանունքները, իսպառ պատել էր զգեստները. երկում էր, որ նա վաղուց է այդտեղ նստած առանց մի թեթև շարժում անելու: Ասօն նայում էր, և նրան թւում էր, թէ իր առաջ մի խորհրդաւոր արարած է նստած, մի ոգի, որ ջրերից դուրս գալով գիտում է, թէ ինչ է կատարւում իրանից վեր, այս աղմկալի ջրաղացում: Ասօն կամացուկ մօտեցաւ, ձեռքը նրա ուսին դրեց:

—Գոպէ ամի, այ Գոպէ ամի:

Ծերունին իր ալրոտ թերթերունքները դէպի նադարձըրեց, նայում էր և կարծես ոչինչ չէր հասկանում:

—Հիւմնդ ես:

—Զէ, մեռած եմ, նրանք ասացին:

Ասօն մնաց մտածմունքի մէջ, իրանց երկսի հոգեկան վիճակների մէջ սոսկալի նմանութիւն կար: Լուռքաշուեց մի կողմ, նստեց քիչ հեռու և ծերունու պէս աչքերը յառեց չախչակին: Եւ քարը դառնում էր հաղառնում ալիւրը փշելով իր չորս կողմը, ջրտան մէջ, ներքեսում ջրերը վերից վար գահավիժուելով փշրւում էին ոռնալով ու հեծեծալով, բուն շարունակում էր դրսում վույշույ անել, իսկ նրանք նստած էին ալիւրով ձերմակած, ինչպէս մարմարէ երկու արձաններ, նստած էին կարծես մի գերագոյն հսկումն կատարելու համար: Լուռ էին. ժամեր անցան:

Յանկարծ գրսում մի սայլ ճռնչաց, մի ձայն կանչում էր.

—Գոպէ ամի, այ Գոպէ ամի:

Գոպէն ցնցուեց, ազքերը թարթեց, շուրջը նայեց կարծես իմանալու համար, թէ ուր է ինքը, ինչ ձայն է լաւում:

—Գոպէ ամի, ուր ես, չես լսում:

Ծերտնին այս անդամ սաքի կանդնեց, կամացուկ առաջացաւ գէպի գուռը և գուրս եկաւ. Շիրինենց Պետօն էր, իր եղբօր հետ ցորեն էր բերել աղալու:

—Բարի երեկոյ, վահ, տնաշէն, ինչու ձայն չես տալիս, մեռայ կանչելով, ասացի՝ մի բան է պատահել հալեռին:

—Բարի եկար. չէ, որդի, ծերութիւնը հանաք չի անում, քարերի գոռգոռոցն էլ մի կողմից չէր թողնում լսեմ, ինչ անեմ, բարով գու էլ ծերանաս:

—Ծերանալու ժամանակ կ'ունենամ, Գոպէ ամի, դու այն ասա, որ էսօր ամբարն աւելել ենք, հաւերին էլ կուտ չը թողինք. Էլած չ'էլածը հաւաքել, քո դուռն եմ բերել. դէ գարուն է, գիտես էլի, ցորեն չի ճարտում. Նորի հոտ ենք առել, կալ ու կուտը հեռու չէ: Էս մէկ անդամին էլ մեղ եօլա տար, մինչև տեսնենք՝ Աստուած ինչ է հասցնում: Հաց շատ ունէինք էէ, ամա հարսանիքս հացի մէջքը կստրեց, դէ մի գեղ կերաւ, հաց կը դիմանայ:

Գոպէն անշարժ կանդնած՝ նայում էր, թէ ինչպէս Պետօն ջուալները ցած է բերում եղբօր հետ:

—Վա, ինչ ես քար կարել մնացել, ասես ուրախ չես, որ ցորեն եմ բերել, մի մօտեցիր, տնաշէն, ձեռքդ դցիր, քօմադ արա, ջուալները ցած բերենք սայլից. հաւից ընկել ես, ինչ է:

—Հա, իրաւ ասացիր, Պետօն, իսպառ հալից ընկած եմ. ծերութիւնը, դէ ինչ ասեմ, ծերութեան տէրը մեռնի. Էլ ոյժ չի մնացել, ասաց ծերունին, մօտեցաւ ջուալներին և միենոյն ժամանակ գաղտադողի հայեացք էր

գցում ջրաղացի գուանը։ Նա անհանդիստ էր, այս վայր-  
կեանին նրան զբաղեցնողը Պետօի և Ասօի հանդիպելն  
էր, որից նա ոչինչ բարի բան չէր սպասում։ Ասօն յան-  
դուգն էր ու կատաղի, այդ նա լաւ գիտէր։

— Ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ գիւղում, Պետօ, հարցրեց  
Ճերտանին՝ մի բան ասած լինելու համար։

— Ե՞ն, ի՞նչ ասեմ, Դսպէ ամի, պատասխանեց Պե-  
տօն՝ ջուաները ցած բերելով. շատ էլ լաւ բան չը կայ.  
Երեկ գեղի երեք կողմում երեք հաւ օրը ցերեկով աք-  
լորի պէս կանչել են, սա իսկի լաւ բան չէ։ Անցեալ օրը  
աւաղակները քշում էին գաշտից ծովէի եզները, ո. Կա-  
րապետի ուխտաւորներ են վրայ հասել, խլել են, յետ  
առւել, լաւ մարդիկ են եղել, Աստուած իրանց ուխտը  
կատարի, բայց արի տես, որ նրանց գնդակից մէկը վի-  
րաւորուել է, վայ թէ մեռնի, մէջտեղ մենք վնասուենք.  
արդէն էս քանի օրը քրդերի «բըսագ»-ի \*) ձէնը մեղ  
հասաւ, Աստուած վերջը բարի անիւ։

— Հա, էդ լաւ չէ, որ նրանք «բըսագ» են անում։

— Էդ էլ մի կողմ մնայ, ամենից հետաքրքիրը գեռ  
չը գիտես, Ապրօն է եկել։

— Սուրբ Կարապետի վալողը։

— Հա, բայց իմանաս ի՞նչ հալի, իսպառ գժուել է  
անաքանդը, օյին բան է, ուսին գցել է մի երկար կը-  
տաւ, պատանս է, ասում է, աշխարհը վերջանալու վը-  
րայ է, ասում է, ամենքդ էլ պատան առէք ու գե-  
րեզման փորեցէք։ Ամեն շաբաթ իրիկուն գնում է գե-  
րեզմանոցը ու մի տեղ փորում է փորում, ասում է՝ գե-  
րեզման եմ շինում. գիշերներն էլ մի էնպիսի բան է  
անում, որ ամենքին զարդանդ է բոնում, տնաքանդը

\*) Քրդերը խիստ քինախնդիր ժողովուրդ են, երբ նրանք  
սպառնում են մէկին, սովորաբար ասում են՝ «բըսագ», որ նշա-  
նակում է «սպասիր»։ այս սպառնալիքից յետոյ նբանք սովորաբար  
անպատճառ վրէժինդիր են լինում, թէկուզ գէպքից յետոյ տա-  
րիներ անցած լինեն. ահա եթէ ինչու «քրդի բըսագ» նշանա-  
կում է անխուսափելի վրէժինդրութիւն։

կանգնում է գեղամէջը և քանի ձեն ունի՝ գոռում է՝ պուրմ, զուրմ... չները ոռնում են նրա հետ, ու մի վատ բան է դուրս գալիս Մեր պառաներին էլ, հօ գիտես, բան է հարկաւոր, առաւտից իրիկունթաւ փուած են տիրացու Գրիգորի դուռը, էլ գիր բանալ, էլ թուղթ գրել տալ, գեղը տակն ու վրայ է եղել:

Պետօի պատմաները Գոպէն այս անգամ լսեց ծայշ բայեղ ուշագրութեամբ. իր ջրաղացում վերջին ժամանակ կատարուած գէպքերը, բուի կանչելլ, ուխտաւոր ների յայտնուիլը նա կապում էր գիւղում պատահած ների հետ: Ծերունին մոռզբազ՝ մատներով խառնում էր իր երկար միքուքը, կարծես պատրաստում էր մի բան ասելու, երբ նրա ուշագրութիւնը դարձաւ գէպի ջրաղացի դուռը, ուր այդ վայրկենին յայտնուեց Ասօն և գիւտում էր նորեկներին:

— Տօ, էնտեղ էլի մարդ ես ունեցել, շարունակեց Պետօն. — ով է... վա, Ասօն է, բարի իրիկուն, Ասօ, ինչ լաւ էլաւ, չը լինի թէ եկել ես հարսանիքիդ ալիւրն աղալու, էդ լաւ է, ես եկել եմ հարսանիքիս պակսեցըածն աղալու, դու էլ հարսանիքի համար, էդ հօ միւնոյնն է, բաղարջ կը թիւնք, գիշերը լաւ կ'անցնի: Այ աղա, դու սայլը քեի, գնան, դարձաւ նա եղօրը, երբ բուլոր ջուախները ցած բերին ու տեղաւորեցին:

— Զուրմն առատ է, փառը լաւ է դառնում. Գոպէ ամի, էէ, դու այն ասա, նօբաթ կայ, թէ չէ:

— Կայ, կայ, որդի, քեղ համար նօբաթ միշտ կը լինի:

— Հապա Ասօի ցորենը...

— Ասօն ցորեն չի բերել, եկել էր իմանալու՝ նօբաթ կայ, թէ չէ, պահեցի մօտս էսօր. մենակ եմ էէ, մենակութիւնը եաման բան է, սիրտս շատ է նեղում. գիտես, որդի, քանի ծերանում եմ, էնքան մենակութիւնն ինձ տանջում է, առաջ, ջահիլ ժամանակներս էսպէս չէր, չախչակն ու քարը ինձ ընկերներ էին, հիմայ էլ չեմ կարողանում մենակ մնալ, մարդի, ընկերի,

խօսակցի կարօտ եմ քաշում, կ'ասես թէ դիշելներն է շատ են երկարացել, խաւարը շատ է խատացել, էլ լաւ չի իմ չորս կողմը:

—Ասօ, հը՛, ի՞նչ կ'ասես, հարսանիքդ երբ ենք ուտում, ասաց Պետօն:

Պատասխանի փոխարէն Ասօն նայեց նրան երկար-երկար: Պետօն զարմանալով նկատեց, որ այդ հայեացքը սովորական չէ, որ նրա աչքերի մէջ մի սոսկալի թու-նոտ բան կայ, արտայայտութիւնը կատաղի է. նկատեց այդ և ինքն էլ չիմանալով թէ ինչու, սարսուց, գլուխը քաշ գցեց, մինչդեռ Ասօն շարունակում էր նայել, կարծես ճաշակելով իր պատճառած անհանգստութեան հա-ճոյքը: Բնազդը Պետօն լաւ բան չէր ասում, բայց նա յիշեց, որ գիւղում ամենքը Ասօն գիծ են համարում, և նրա այդ սոսկալի հայեացքը փորձեց բացատրել նրա խենթութեամբ:

Լուռ էին: Գոսկէն դիտում էր այդ յամի տեսարա-նը, նա զգում էր, որ իր ջրաղացում գէշ բան է պատ-րաստում, զգում էր, որ Պետօն առանց իմանալու կանգնած է մի կատաղի թշնամու հանդէպ. երկու ե-րիտասարդները հակառակսրդներ էին, մէկը գիտակցա-կան և ահաւոր իր հազիւ զսպուած կրքով, և միւսը ան-գիտակից ու անհանդիստ ընդհանուր լուռթեան տակ թագնուած խորհրդաւորութեամբ: Էլ խօսել չէր լինում: Ասօի հայեացքը ամեն բան փշացրեց: Գոսկէն աւելի փորձուած էր. նա դարձաւ Պետօն:

—Հարսանիքը մի կողմ թող, Պետօ, վեր կաց, ցո-րենդ ածենք աղալու:

—Հա, լաւ ես ասում, պատասխանեց Պետօն՝ ուրա-խացած այս միշամտութեամբ: —խօսքով ընկայ, մոռացայ:

Նրանք վեր կացան, մի ջուալ գատարկեցին քարի վրայ կախուած տախտակէ ամանի մէջ, որի վարի փոք-րիկ անցքից ցորենն սկսեց մաղուել քարի մէջ, որ դառ-նալով փշում էր չորս կողմը սպիտակ ալիւրը: Գոսկէն ու Պե-տօն կանգնած նայում էին այդ տեսարանին:

— Լաւ է աղում, ասաց Պետօն։

— Հա, լաւ է աղում, վրայ բերեց Գոպէն։ — Երկու օր առաջ սրել եմ, առաջին սուրն արդէն անցել է, քարն էլ աւաղ չի տայ։

Զախարկը չխկխկում էր, քարը դառնում էր, աշխարը գուրս թափառում, և նրանք շարունակում էին դեռ երկար կանգնած մնալ միևնոյն տեղում։ Երբ մէկ էլ յետ նայեցին, Ասօին իր տեղում չը դժան, նա դուրս էր գնացել։ Գոպէն անհանգիստ կերպով շուրջը նայեց։ Պետօն գարձաւ նրան։

— Գոպէ ամի, ինչ է պատահել Մուրադի տղին, գիւղում լաւ բան չեն ասում։

— Է՞հ, որդի, ինչ ասեմ, չար աչքի տէրը մեռնի, ասում են՝ աչքով են տուել։

— Հա, ասում են՝ չար աչք է. գիտես, հէնց գիշեր ցերեկ սար ու ձոր է թափառում, ձեռքը դործից պազել է խապառ, մեղք, մեղք ջիւանին, նշանածն էլ սեաւորել է, մէրն էլ մեռաւ սրբերի շեմքը մաշելով։ Է՛ս, Գոպէ ամի, ով կարող է իմանալ Աստծու բանը, մարդու գործը որ մի անգամ ձախ գնաց, էլ ուղղել չի լինի։ Մուրադի օջաղի աստղը մի անգամից կ'ասես թեքուեց, էն մէկ տղան էնպէս էլաւ, էս էլ... ինչ ասեմ, մարդ բան չի հասկանում. տեսար՝ ինչպէս նայեց ինձ. մարդ վախենում է հէրօրհնածի աչքերին նայել։

— Հա, լաւ չի, լաւ չի, կրկնեց Գոպէն՝ գլուխն օրորելով. — տեսնեմ՝ էլի ուր գնաց, գիտեսին, կայ, Պետօ, նրա հարսանիքի մասին գուշատ շատ մի խօսիր, չարանում է, երբ պսակուելու անուն ես տալիս։

— Դէ տնաշէն, ինչ իմանամ, ասացի՝ ջահիլ է, մի քիչ սիրտն ուրախացնեմ։

— Գնամ տեսնեմ՝ էլի ուր գնաց, ասաց Գոպէն և դուրս գալով կանչեց։

— Ասօ. Ասօ։

Զայն չը կար։

— Ասօ, այ Ասօ։

Դարձեալ ձայն չը կար:

—Ելի գնաց, մռմնաց վշտացած ծերունին, ջրաղացի  
շորս կողմը պտոյտ աշեց, պրադեց: Ծեր աչքերուվ ու-  
շի ուշով նայեց և յուսահատ յետ եկաւ, իր աեղում  
նստեց:

Ասօն չը կար:

## X

Ջրաղացից դուրս գալով Ասօն ուռիների տակից նախ  
դանդաղ, ապա աւելի և աւելի արագ քայլում էր առուի  
երկարութեամբ: Նա կարծես վախչում էր ջրաղացից:  
Պետօի գալուց առաջ իր միայնութեան խոհերը նրա  
հոգում մի մեղմութիւն էին առաջ բերել, որ եթէ էլլ  
մի փոքր աճէր, կարող էր նրա համար փրկարար լինել:  
Ուխտաւորների խօսակցութիւնը, նրանց պատմածները  
բուժիչ բաղամի պէս իջան նրա սրտի վէրքերի վրայ,  
և մի փոքր սփսփեցին. Ասօն այնուհետև իր գիւղից, իր  
շղապատից դուրս սկսեց աւելի հեռուն նայել, աւելի  
հեռուն մտածել և զգալ: Սառայի չքնաղ պատկերը  
եթէ նրա աչքից իսպառ չ'անյայտացաւ, գոնէ այնքան  
հեռացաւ, որ հազիւ երկում էր մշուշի միջից, Ասօն ա-  
ւելի հանգստութեամբ էր գիտում այդ միզապատ պատ-  
կերը և նոյն իսկ աշխատում էր իսպառ դուրս վանել  
իր գլխից: Եւ նա ծրագրեր էր կազմում իր ապագայի  
մասին, երբ յանկարծ, անսպասելի կերպով ջրաղացում  
լոյս ընկաւ Սառայի բաղդաւոր ամուսինը՝ Պետօն, և դո-  
րանով ամեն բան տակն ու վրայ եղաւ: Ասօի անդի-  
տակից ախոյեանի այսպէս յանկարծակի յայտնուելը նր-  
րա տակաւին լաւ չը գոցուած վէրքը բաց արեց բոլոր  
լայնութեամբ ու խորութեամբ: Պետօն կարծես գիտ-  
մամբ եկել էր այս մենաւոր անկիւնը Ասօի առաջը  
փռելու իր երջանկութիւնը, առանց գիտակցելու, որ  
թիթեռնիկի պէս ինքը խաղում է բոցերի հետ: Եւ ար-  
դարեւ, խանդուսութիւնն ինչպէս մի շղթայազերծ կա-

տաղի գաղան Ասօի մխացող հոգում գլուխ բարձրացը՝  
րեց, և աւերածի, չարութեան անյաղթելի տենչը նրա  
սիրտը բռնեց և գաշճրեց մի բարբոքուած խարոյկ։ Նա  
մի անդուսպ պահանջ զգաց այդ ժամին անպատճառ մի  
անսովոր բան անել, որից տուժողը Պետօն լինի, մի բան  
քանդել, մի բան չարդել, վասել, տրորել ի հաշիւ Պե-  
տօի։ Եւ նա վաղում էր՝ բոռնցքները սղմած, հեալով,  
աչքերը խաւարի մէջ կատաղաբար լայն բացած, փախ-  
չում էր առանց իմանալու, թէ ինչ է անելու, բայց  
հաստատ վճռած մի բան անել, մի չար, մի վատ բան։  
Կարելի էր կարծել, թէ նա փախչում է մէկի ձեռքից,  
կամ հալածում է մէկին խաւարի մէջ. իր խելագար ըն-  
թացքի մէջ նա մի քանի անդամ վայր ընկաւ երեսի վը-  
րայ, կրկին վերկացաւ անէծքի մռմոսցով, մի վայրկեան  
կանդ առաւ, լսեց իր անունը հեռուից, մի բան ասաց  
առամների արանքից և կրկին վազեց։ Նա փախչում էր  
ջրաղացից, նրա աղմուկից, չախչակի ձայնից. Նա ուզում  
էր կտրուել այդ բոլորից՝ միայնութեան և խաւարի մէջ  
մի անասելի բան մտածելու, մի սարսափելի բան որո-  
շելու համար։ Վաղում էր, գլխում աղմուկ ու մտքերի  
ժիոր, զայրոյթով կրծոտում էր շրթունքները՝ կարծես  
պատժելու համար մի չար բան մտածելու իր անկարո-  
զութիւնը։

Ահա նա հասաւ սաւաղին ու կանգ առաւ. Ջրերն  
աղմուկով ցած էին թափւում ու գնում գէպի հեռուն,  
գէպի խաւար հարթութիւնը։ Ասօն նայում էր, և յան-  
կարծ կուացաւ, երկու ձեռներով կախուեց և ջրերի  
թումբը պահող երկու ցից դուրս քաշեց ու յետ փախաւ  
յանցաւորի պէս։ Նրա յետեկից սաւաղը լայնանում էր  
կամաց կամաց, ջրերն աղմուկով կրծում էին թումբը և  
աւելի ու աւելի լայն հոսանքներով տարւում գէպի գաշ-  
տափափայրը, իսկ Ասօն յետ էր փախչում գէպի ջրա-  
զաց։ Պետօն արդէն քնել էր, իսկ Գոպէն նստած՝ ըս-  
պասում էր։

—Եկած, որդի, որքան կանչեցի, ուր գնացիր, անշէն,

դուրսը մութ է, ժամը չար, լաւ չե շատ հեռանալ ջը-  
րազացից:



—Հեռու չեի, ձայնդ էլ լսեցի, ուր պիտի գնայի,  
ման էի գալիս ջրազացի յետևում:

Ասօն նստեց ջրազացի անկիւնում, մերթ նայում  
էր քարին, մերթ Պետօին, վերջինս ասես բոլորովին մո-  
ռացել էր նրան և զբաղուած էր իր գործով. նա մերթ  
լնդ մերթ վեր էր կենում, մօտենում քարին, ալիւրը  
հաւաքում, կուռիկով լցնում ջուալը, ապա կրկին ցո-  
րեն աւելացնում քարի վրայ կախուած տախտակէ ա-  
մանի—դեօչագի մէջ, իսկ քարը դառնում էր թափով,  
և շախչակը ցատկրտում էր լինչիւացնելով: Նատ գիշեր  
անցաւ, Գոպէն կամաց կամաց ննջեց իր նստած տե-  
ղում շախչակի ներդաշնակութեան տակ, Պետօն էլ հո-  
գաց ինչ որ պէտք էր, նոյնպէս նիրհեց. Ասօն մնաց ան-  
քուն, անշարժ միւնոյն տեղում: Նա մտածում էր, և  
շատ, շատ բան ունէր մտածելու: Ահա մի քանի օր է,  
որ նա ապրում է արագութեամբ, գիպուածներ են յա-  
ջորդում իրար, որոնք ասես ճակատագրական ուժով գա-  
լիս են աղմկելու նրա առանց այն էլ սարսափելի գո-  
յութիւնը: Այն ուխտաւորները... այս Պետօն... Գեռ այս  
առաւօտ նա մտածում էր գլուխ առնել կորչել այս  
կողմերից և ուխտաւորների պէս գնալ սրբերին հարցը-  
նելու՝ կենդանի՞ է ինքը, թէ մեռած, մտածում էր  
որևէ կերպով վերջ տալ իր անտանելի կացութեանը: Այս  
առաւօտ նա խորապէս զգաց, որ իր անձնական դար-  
դից աւելի խոշորը կայ, աւելի լայն ու խորը, քան ամե-  
նամեծ ծովը, զգաց և մտածում էր այդ ծովի մէջ նե-  
տուել, և յանկարծ... Պետօն, որ կարծես չար սատա-  
նայի պէս եկաւ, իր նոր ճանապարհի վրայ ցցուեց: Ախր  
հրտեղից և ինչու լոյս ընկաւ սա. Ասօն նրան այժմ ա-  
տառմ է իր հոգու բոլոր գօրութեամբ և միաժամանակ  
իր զգացմունքը գտնում է ամօթալի, իր հոգու խոր-  
քում կարմրում է. ինչ մեղաւոր է Պետօն, որ Սառան՝  
նրա կինը դեղեցիկ է. ինչ մեղաւոր է այս քնող

մարդը, որ Ասօի սիրտը կպել է նրա օրինաւոր կնուցը։ Ասօն լաւ գիտէ, որ իր արածը վատ բան է, որ Պետօն բնաւ մեղք չ'ունի, բայց գիտէ և՛ այն, որ ինքն ատում է նրան մինչև այն աստիճան, որ քիչ է մնում վերկենայ, նրա կոկորդը սզմի կատաղաբար ու խեղդի։ Քիչ առաջ որեւէ ձեռվ իր զայրոյթն ու ատելութիւնն արտայայտած լինելու համար նա քանդեց սաւաղը, որ յըերը հոսեն, գնան, ջրաղացը կանգ առնի, և Պետօի ալիւրը չ'աղացուի, բայց այժմ ամաչում է իր արածի համար, այն աստիճան տղայամիտ, այն աստիճան խղճուկ է թւում նրան իր արածը։ «Ալիւրը չ'աղացուի», մրմնջաց նա, և կծու ժպիտը ցաւագնօրէն ծռմռեց նրա շրմթունքները։

Ասօն կրկին նայեց քնած Պետօին, որ այժմ հաշկառակի պէս սկսեց խիստ անախորժ կերպով խռռացընել. նա էլ աւելի զայրացաւ, նրան թւաց, որ ոչ ոք աշխարհում այդպէս չի խռռացնում, որ միայն Պետօն է ընդունակ այդպիսի զգուելի ձայներ հանել, այտերը փուրքսի պէս ուռցնել, շրմունքները վերև ներքեւ անել և քթով խոզի պէս փնչացնել։ Այդ բոլորը վատ, շատ վատ, նոյնիսկ գարշելի թւաց Ասօին. Գոպէն էլ էր խըռռացնում, նոյն իսկ բարձրաձայն, ուժգին, բայց նա այնպէս զգուելի չէր թւում, այս Պետօն ուրիշ բան էր, Ասօն նայում էր և կատաղում, ինքնիրան զայրանում էր, որ նայեց, բայց մի վայրկեան յետոյ նորէն նայում էր։

—Մեղայ Քեզ, Աստուած, նահմանթ քեզ, շար սատանայ, ասաց նա կամացուկ, նկատելով՝ որ իր զայրոյթն ընդունում է շատ վտանգաւոր կերպարանք, և իր գոլիքից սոսկալի մտքեր են անցնում։ Մի վայրկեան նա այնպէս էր տարուած՝ իր ատելի ախոյեանի դէմքը, բարձր ու ցածր անող կուրծքը դիտելով, որ անգիտակցաբար վիզը ձգուել էր առաջ, ձեռքերի մատները բացուխուփ էին անում ջղաձգաբար, ինչպէս որսը նկատող արծիւը, որ պատրաստում է իր ճիրանները։ Ա՛խ, թէ այս խոզի պէս փնչացնուի բարձր յանկարծ



չքանար, Սառան ազատ կը լինէր, մնացածը հեշտ էր, այնուհետև ինչ ուզում է՝ թաղ լինի:

Եւ ինչ, գժուռան է ազատուել այս ատելի արարածից. բաւական է վեր կենալ, երկու ձեռքով սղմել կոկորդը, մի քանի րոպէ պահել, Այս, խեղդել, խեղդել, մտածում էր նա ծնկների վրայ ընկած ու հեալով. և այն բեխերը, որ բարձր ու ցածր են անում անդադար, ինչ վատ են, ինչ գարշելի Պետօն վատ մարդէ, վատ մարդ, մտածում էր նա, բայց թէ ինչու, այդ որոշակի ասել չէր կարողանում, գիտէր միայն, որ նա վատ մարդ է և եթէ աշխարհից չքանայ, իր համար շատ լաւ կը լինի: Եւ նա նայում էր բորբոքուած, կատաղի աչքերով, հեռւմ էր անընդհատ, սրտի զարկի ձայնը լսում էր, զզի երակները լցուել, բարձրացել էին, ամբողջ մարմնով գողդողում էր և որսին մարադ մուած կատուի պէս աւելի ու աւելի ձգում էր դէպի քնած Պետօն, ատամներն իրար սղմած ու սպառնալի:

Յանկարծ չախչակի ձայնը կտրուեց, նա էլ չէր ցատկրում, քարը կանգ առաւ, ջրալացը լռեց, և նոյն վայրկենին Գսպէն ու Պետօն զարթնեցին:

—Ի՞նչ պատահեց, բացազ անչեցին նրանք միաժամանակ աչքերը տրորելով:

—Զուրը կտրուեց, քարը կանգ առաւ, պատասխանեց Ասօն սաստիկ յուզուած և դողալով յանցանքի մէջ բռնուածի պէս:

—Հա, հա, ջուրը կտրուեց, երեխ սաւաղն է, ինչ օրով էի պնդացրել, էլի քանդուեց, տրտնջաց Գսպէն մտաղբազ:

—Դու հանգիստ մնա, Գսպէ ամի, պատասխանեց Պետօն ոտքի կանգնելով. —Ես ու Ասօն կերթանք հոգաւուզ Վերկաց, Ասօ, քանի ուշ չէ, շարունակեց Պետօն. գնանք, թէ չէ յետոյ շատ գժուար կը լինի առաջը փակել: Պետօն շտապով գուրս թռաւ:

Ասօն շարունակում էր նստած մնալ միւնոյն տե-

դում՝ անհանգստութեան, հոգեկան ներքին խռովութեան նշաններ ցոյց տալով։

—Ասօ, այ Ասօ, լսուեց Պետօի ձայնը ջրաղացի յետեից. —շնուտ արի, տնաշէն, սաւաղը տարաւ, տարաւ բուլրը։

—Ասօ, որդի, հիւանդ հօ չես, ես երթամ, եթէ այդպէս է, ասաց Գոպէն, ուշադրութեամբ նրան նայելով։ Պատասխանի փոխարէն Ասօն արագութեամբ ոտքի կանգնեց ու դուրս թռաւ։ Երկու ախոյեանները կորան խաւարի մէջ. ճանապարհն անցնում էր ուռիների տակով, հեռուեց լսում էր սաւաղի ջրերի ձայնը, իսկ ջրաղացի առուն դատարկում էր արագութեամբ։ Այս անգամ խաւարի մէջ ծառերին դիպչելով, թմբերին ընդհարուելով՝ նրանք վազում էին հեիհե, Պետօն առուածից և Ասօն նրա յետեից, առանց խօսելու, առանց ազմուկի։ Մի քանի անգամ մժութեան մէջ նրանք դիպան իրար, վայր ընկան, ապա վերկացան և կրկին վազեցին։ Ահա վերջապէս սաւաղը. առուի բարձր թմբի մը խոշոր մասը քանդուում էր աշագութեամբ, և գէպի վար, գէպի դաշտավայրը շառաչիւնով իջնող ջրերի կոշհակները աւերած էին առաջ բերում ամեն վայրկեան։ Երկու երիտասարդները կանգնած՝ նայում էին շուարած, չիմանալով ինչ ձեռնարկել։

—Ի՞նչ անել, հարցրեց Պետօն մտաղբազ և քըրտնաթոր ճակատը սրբելով։

—Զը գիտեմ, պատասխաննեց Ասօն առանց մտածելու։

—Թէ ծառի ձիւղեր լինէին, հեշտ կը լինէր փակել։

—Հա, բայց ինչով ձիւղեր կոտորենք։

—Ասօ, յետ վաղիր շուտով, Գոպէն մի քան կունենայ, առ և բեր, մինչև ես այստեղից այնտեղից մի քանի քարեր հաւաքեմ։

—Ի՞նչ կարող է ունենալ։

—Ի՞նչ, ով գիտէ, ջրաղացի տէր է, տնաշէն, ուրագ, կացին...

— կացի՞ն... կրկնեց Ասօն վարանոտ ձեռվ, կացի՞ն...  
— Հապա, կացին, շնուտ վաղիր, քո հօրն օղորմի:  
— Ենուր է:

— Տօ, ի՞նչ հարց ու փորձի ժամանակ է, տնաշէն,  
վաղիր, չես տեսնում, որ էլ առուի մէջ ջուր չը մնաց:  
— Գնամ բերեմ, համ... լաւ ես ասում, գնամ, հա,  
գնամ:

Եւ Ասօն յանկարծական վճռականութեամբ կորաւ  
ծառերի տակ իշխող թանձրիսաւարի մէջ, միայն մի առ-  
ժամանակ դես լսում էր նրա շտապ ոտնաձայնը,  
որ նոյնպէս շուտով խլացաւ: Զրազացում Գոպէն  
զարմացաւ, տեսնելով մինչև որ աստիճան Ասօն գու-  
նատ է ու յուղուած, և երբ վերջինս կացինը խլեց ու  
դուրս թռաւ, մի յանկարծական միտք ծերունուն քա-  
րացրեց: Քիչ յետոյ Ասօն դարձեալ սաւաղի վրայ էր՝  
փայլուն դորձիքը ձեռքին:

— Բերի՞ր, Ասօն:

— Հա, բերի... սուր է... ահա...

— Դէ ճիւղեր կոտորիր, իսկ ես քարեր կը հաւաքեմ:  
Ասօն հնազանդուեց լոռութեամբ: Նրա տենգոտ և  
ուժեղ հարուածների տակ իսկոյն ընկան մի քանի մատաղ  
ծառեր, որ նա արագութեամբ մաս-մաս կտրատեց, յետոյ  
կացինը գօտին խրեց և ճիւղերի խուրձերը քաշ տուեց,  
ջրին մօտեցրեց: Պետօն մտաւջուրը՝ թմբերին յենուած,  
ընկերը տալիս էր նրան ճիւղերի խուրձեր, և նա տեղա-  
ւորում էր ոտներով ու քարեր գցում վրան: Գործը լաւ  
էր ընթանում, միայն Ասօն խիստ տարօրինակ էր, նա  
երբեմն անշարժ կանգնած էր մնում, երբ ընկերը քար  
կամ ճիւղ էր ուզում, երբեմն առանց ուշը դարձնելու՝  
խուրձը կռացած Պետօի դլիխն էր գցում:

— Ի՞նչ ես անում, Ասօն:

— Ե՞ս... ճշմարիտ, լաւ չեպաւ... այ, կացինը խրել  
եմ գօտիս... գիտե՞ս ինչպէս սուր էր... մի հարուածով,  
հա, մի հարուածով... քեզ չեմ տեսնում, աչքերիս ա-

ուած չի միմում, այլ մութ է, շատ մութն է, այնպէս  
չ... Պետք, դու լու տեսնում ես...

— Ճիւղեր տուր, քար տուր, կրկնում էր Պետօն  
անընդհատ, բայց երօք խիստ զարմացած էր ընկերոջ  
վարժունքի տարօրինակութեան վրայ։ Ասօն կրկին գոր-  
ծի էր կենում, ժամից աւել էր, որ նրանք աշխատում  
էին. ջրերի առաջը փակուած էր արդէն, Պետօն թմբի  
վրայ կուցած՝ վերջին քարերն էր տեղաւորում, իսկ  
Ասօն նրա գլխավերեր կանգնած՝ հետեւում էր նրա աշ-  
խատանքին։ Եթէ Պետօն այդ վայրկենին գլուխը բար-  
ձրացնէր և կարողանար խաւարի մէջ տեսնել, նա կը  
սոսկար Ասօի գէմքից, կը նկատէր, թէ ինչպէս նա գող-  
լուղում է ամբողջ մարմնով, ինչպէս պինդ սղմել է ձեռ-  
քի մէջ կացնի կոթը։ Պետօն շարունակում էր անտար-  
բերութեամբ աշխատել. Ասօն մի քանի անգամ յետ  
քաշուեց, առաջ եկաւ, կրկին յետ գնաց, էլի եկաւ  
իր նախկին տեղը, մի քանի անգամ գոտկից դուրս  
քաշեց կացինը, էլի շտապով տեղաւորեց։ Բոլոր  
նշաններից երևում էր, որ նա մի վճռական և ա-  
նուղղելի բան անելու վրայ է. մէկ էլ յան-  
կարծ նա առաջ անցաւ գէպի Պետօի գլխավերեր,  
թափով գուրս քաշեց գոտկից կացինը, երկու ձեռքով  
բարձրացրեց օդի մէջ, ճօճեց և ահազին թափով իջե-  
ցընում էր Պետօի գլխին, երբ մի ձեռք խաւարի մէջ ու-  
ժեղ կերպով բռնեց նրա գաստակը... Գապէն էր, որ հէնց  
նոյն վայրկենին վրայ հասաւ։ Ասօի ձեռքերը քաշ ընկան  
թուլացածի պէս, նա հեռում էր, գէմքը կատաղի ու այ-  
լանգակ։

— Վերջացրիք, համ, ասաց Գապէն առհարկի սառ-  
նարինութեամբ, էղ լսւ է, զօրանաք, մենակ ինչ օր  
պէտք է քաշէի։ Չեմ էլ հասկանում, թէ ինչպէս է պա-  
տահել, որ թումբը քանդուել է, ցիցերը նոր էին, հաս-  
տառուն. հը՛, ինչ կ'առես, Ասօ։

Ասօն առանց պատասխանի գցեց կացինը և փա-  
խաւ կորաւ խաւարի մէջ։

—Եկամբ, Գոպէ ամի, ասաց Պետօն՝ դլուխը բարձը բացնելով.—Հա, պրծանք, զու աշխատանք էր, հոգիներս հանեց, Էնպէս չէ, Ասօ:

—Ասօն գնաց ջրաղաց:

—Ի՞նչ շուտ, տարօրինակ է. գիտես ի՞նչ, Գոպէ ամի, շարունակեց Պետօն, երբ նրանք ճանապարհ ընկան. —Ես վախենում եմ, որ Ասօին մի վատ բան պատահի, նա կատարեալ գիտ է, ինչ անում է, գժի պէս է անում: Երկու անդամքից մնաց ճիւղերով ինձ ջրի մէջ դլորէր. Խօսելիս էլ ձայնը դողդողում էր, շունչը բռնւում, հեռում էր. ուղիղն ասած՝ գիշեր ժամանակ մութ տեղում լաւ չէ Ասօի պէս ընկեր ունենալ, տնաշէնը ընկնաւորի նման է, իստակ ընկնաւոր:

—Հա, տարօրինակ է, ասաց Գոպէն մտազբաղ ոլոեց, պարզ էր, որ նրան սաստիկ տանջում էր մի միտք, նա շմածի պէս էր, չէ որ նա հազիւ փրկեց Պետօին, մի վայրկեան ուշ հասնէր, Ասօն նրա դլուխը կացնով ջախջախած կը լինէր: —Տէ՛ր Աստուած, մտածում էր ծերունին, ինչ էր լինելու, ինչու էր ուղում նա ոճը րագործ դառնալ:

—Գիտես, շարունակեց Պետօն, նրան չարք է պատահել, հա, անպատճառ չարքի բան է, ես վախենում էի դլուխս բարձրացնել և նրան նայել, սարսափելի էր, հեռոցը լսում էի, կ'ասես գեերը խեղդում էին, լաւ որ եկար:

—Հա, լաւ որ եկայ... սիրտս ասաց՝ մէկ վերկաց, գնա, տես՝ տղերքն ի՞նչ են անում, և վերկացայ, շօշափելով, խարխափելով եկայ, մութ տեղը աչքերս լաւ չեն տեսնում, դէ քանի՛ տարեկան եմ, հա, բայց էլի լաւ որ եկայ, փառք Քեզ, Աստուած, լաւ որ եկայ...

Հասան ջրաղացին, Ասօն չը կար:

—Էլի չը կայ, ասաց Պետօն:

—Հա չը կայ, տեսնես՝ ուր գնաց:

—Աստուած ազատէ չարքից:

—Թող Աստուած ազատէ:

Նրանք ներս մտան և անկարող էին լսել հեռաւոր ծառերի տակից լսուող հեծկլտանկները. Ասօն երեսի վրայ ընկած, կուրծքը չանդուում էր ու հեծեծում: Իր մը տադրած, անյաջող ոճիրը այժմ սոսկումով բռնել էր նրան, նա դողում էր նոյնիսկ իր չիրագործուած յանցանքի մեծութիւնից, սիրոն այրում էր, և նա լուսիաւարի մէջ մեն մենակ լալիս էր, լալիս էր իր անկումը, իր ամօթը, անիծում էր այն անմիտ, անհեթեթ ոճը րի միտքը:

—Ասօ, Ասօ:

Գոպէն էր, ջրաղացում՝ համբերել չը կարողացաւ, դուրս եկաւ, և այս ու այն կողմն ընկած՝ փնդրում էր Ասօին, կանչում էր բարձրածայն. բայց նա լուս էր:

—Ասօ:

Գոպէն առաջացաւ՝ միժութեան մէջ խարիսափելով և աննկատելի կերպով Ասօի գլխավերելը կանգնեց:

—Ասօ, ինչու ես այստեղ, որդի:

—Հեռու, հեռու ինձանից, ամի Գոպէ, ես ոճրագործ եմ, ես մարդասպան եմ:

—Թող այդ, որդի, վեր կաց ջրաղացը դնանք, դուրս իսոնաւ է:

—Օ՛, ես քո շեմքը կը պղծեմ, ինչ էի անում և ինչու. տուր ինձ մի դանակ, Գոպէ ամի. թող, որ կուրծքըս պատռեմ և այս անիծուած սիրոս դուրս հանեմ, չներին գցեմ: Վառեց, վառեց ինձ, ես մեռնում եմ:

Ասօն թաւալում էր գետնին, գալարւում էր վիրաւոր օձի պէս:

Գոպէն կռացաւ, հօր պէս գրկեց, բարձրացրեց նըրան ու մեղմութեամբ խօսում էր հետը՝ հանգստացընելու համար. ի զ՞ուր:

—Ես ոճրագործ եմ, կրկնում էր Ասօն.—Լոյսի առաջքեզնայել, նրան տեսնելչեմ կարող, թողինձ, ամի, չարնիմ ոտքին կապուած է: Եւ նա դուրս ընկաւ ծերունուձեռքից ու հեռացաւ շտապով:

—Ասօ, Ասօ:

—Ես ոճրագործ եմ; հեռու ինձանից...  
 Գոպէն կանգնած՝ նայում էր խաւարի մէջ երկար-  
 երկար, ապա աչքերը որբեց ու յետ դարձաւ ջրաղաց:

Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ

(Կը շաբանակուի)